




“ԹՈՂ ՏՈՒՔ ԲԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՄԻ ԳԱՆ” ԳՈՒԿ. ԺԸ. 46.

ՀԱՏՈՐ ԺԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒԱՐ 1, 1882

ԹԻՒ 1



ԳԵՏԱԶԻ

Այս անասունը կը գտնուի Ափրիկէ Նեղոսի, և այն երկրին ներսի կողմն ուրիշ գետերու մէջ: Մարմինը շատ մեծ է, երբեմն մինչև վեց և աւելի կանգուն երկայն: Կ'ուտէ խոտ և արմուիք, և շատ վնասակար է մշակեալ արտերու որ գետերու մտն են:

Ընդհանրապէս չի վնասեր մարդու եթէ չգրգռուի, բայց երբ վերք կ'առնու, սաստիկ կը կատաղի և իւր ուժեղ ծնօտիւ կրնայ ջախջախել նաւակ մը: Էգ գետաձին կը ծնանի մի միայն ձագ զոր իւր թիկան վրայ կը կրէ, երբ լողալով կու գայ ջուրին երեսը շունչ առնուլ: Գժուարին է որ

սալ այս անասունը, քանզի մարմն այնպէս թանձր է որ նիզակ և հրացանի գնդակ անգամ հաղիւ կրնայ խոցել զնա: Գետաձին կ'որսան մին համար որ ունի խողի մայ համ. նոյնպէս ժանեաց և կաշոյն համար որմէ կը շինուին խարաղան:

այլ

ԾՆՈՒՆԻ

Երբ կը յիշենք թէ Յիսուս այնչափ սիրեց զմեզ որ երկիրնք թողլով աշխարհ եկաւ և մեզի համար մեռաւ, արդարև պարտինք մենք ևս մեր սիրտերը տալ անոր: Այս ըլլալու է մեր զգացումն երբ կը խորհինք և կը խօսինք Քրիստոսի Ծննդեան վրայ: Ծնունդն ըլլալու չէ մեզ համար լակ ուրախութեան որ, այլ Ծննդեան ատեն ունենալու է մեզի համար աւելի խորին նշանակութիւն մը: Արդարև Ծննունդը չորհուրեալ եւք մեր բարեկամաց և ուրախանալու եւք Ծննդեան առթիւ: Բայց ստուգիւ ուրախանալու իրաւունք կ'ունենանք այն ատեն երբ կը խորհինք թէ ինչ կը նշանակէ Ծնունդը: Այս ատեն աւելի կը ամենք Յիսուսի ծնունդը: Ի՞նչ մեծ մարդասիրութիւն է Յիսուսի մարդասիրութիւնն որ հաճեցաւ աշխարհ գալ, և իբր աղքատ մանուկ ծնանիլ: Ինչպէս աղքատ և խոնարհ վիճակի մէջ ծնաւ, նոյնպէս և ապրեցաւ մինչև ցմահ: «Անիկա անիրաւութիւն կրեց ու չարչարուեցաւ, բայց իբր բարանը չբացաւ:»

Արդ, սիրելի տղայք, Յիսուս այս ամէնն յանձն առաւ մեր սիրոյն համար: Յիսուս մեռաւ որպէս զի մենք անոր հաւատարմով ընդունինք թողութիւն մեր մեղաց, և ի վախճանի հասնինք երկինք: Յիսուս իբր անձը տըւաւ մեզ համար: Ի՞նչ փառաւոր պարգև է Ասկէ աւելի մեծ պարգև մը կրնա՞ր ըլլալ: Միթէ այս պարգևն, ըստ Պողոսի առաքելոյն, չէ՞ «Աստուծոյ գերազանց շնորհքը»: Արդ, երբ Յիսուս այսպիսի մեծ շնորհք տուաւ մեզ, մենք ալ պարտինք անոր տալ մեր սիրտերը: Այս է մեծագոյն պարգևը զոր կրնանք ընել Քրիստոսի: Բայց Քրիստոսի շնորհաց փոխարէն տալու համար չէ որ մենք մեր սիրտերը պիտի տանք անոր, քանզի մենք չենք կրնար փոխարէն տալ անոր շնորհաց: Մեր սիրտերը տալով անոր կը ցուցնենք թէ որչափ պատուական կը համարենք այն մեծ և օրհնեալ պարգևը: Եւ փրկիչը պիտի հաճի մեր այս պարգևին: Ինչն է որ կը պահանջէ զայն մենէ: Մինչ կը խորհինք անոր մեծ պարգևին վրայ, պարտինք լսել նաև անոր քաղցր ձայնը որ կ'ըսէ, «Որդեակ, քու սիրտդ ինձ տուր:»

Սիրելի տղայք, չէ՞ք ուզեր Յիսուսի տալ այսպիսի նշան մը ձեր սիրոյն, Յիսուսի որ իբր անձը տուաւ ձեզի համար: Դուք ձեզ անոր նուր

րեցէք: Քրիստոս այս պարգևը կ'ուզէ ձեռնէ:

ՃՇՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Նաւապետ Յարութիւն ունէր գեղեցիկ նաւ մը, և որովհետև շատ կը սիրէր աղայք, քանի մը աղայ հրաւիրեց շաբաթ օր մը նաւով պոսոս մը ընելու: Որոշեալ ժաման բոլոր աղայք եկած նստած էին. բայց ի Յովհաննէսէ որ նշանաւոր եղած էր իւր դանդաղութեան համար: Միւս բոլոր աղայք պատրաստ էին, և շատ կը փափաքէին նաւը մանել: Բայց Յովհաննէս չէր երեւեր: Տղայք Յարութիւն Նաւապետէն ինդրեցին շատով ճամբայ ելլել: Նաւապետն ըսաւ, «Աւելի աղէկ չըլլա՞ր որ քիչ մ'ալ սպասէք, և Յովհաննէս ալ մէկտեղ աւնենք:»

«Արդէն բաւական սպասեցինք,» ըսաւ Միհրան Սարգիսեան:

«Գրեթէ կէս ժամ է որ հոս կեցած ենք և Յովհաննէսի կը սպասենք, ես չեմ ուզեր որ աւելի սպասենք» ըսաւ Անտոն:

«Ոչ,» յարեց Անդրանիկ որ տղոց պարագլուխն էր, «ոչ, այլ ևս սպասելու չենք: Յովհաննէսի համար սպասել անօգուտ է, որևիցէ պարագայի մէջ նա ճիշդ ժամանակին պատրաստ չըլլար: Նախաճաշի ատեն, ընթրիքի ատեն, պառկելու ատեն և անկողնէն ելլելու ատեն միշտ ուշ կը մնայ: Անոր մայրն ինչ որ կ'ընէ, չկրնար ճիշդ ժամանակին դպրոց զրկել զանի: Եթէ Յովհաննէս տեղ մը զրկուի, երբէք ճիշդ ժամանակին չերթար: Անցեալ շաբաթ երկաթուղով հօրեղբօրը տունը պիտի երթար, բայց այնչափ ուշ հասաւ կայարանը, որ կառաչուն մեկնած էր, և ինք ետ մնաց: Միշտ ուշ կը մնայ, և հիմա մենք անոր համար ինչո՞ւ նեղուինք: Օ՞ն երթանք:»

Տղայք մտան նա, և նաւը ճամբայ ելաւ: Յովհաննէս իբր քառորդ ժամ ետքը աճապարանօք եկաւ այն տեղն ուր պիտի ժողվուէին միւս աղայք, և շատ ցաւեցաւ տեսնելով որ անոնք արդէն մեկնած էին: «Ո՛հ, այս ի՞նչ գէշ բան է,» ըսաւ ինքնին, «ի՞նչ գէշ բան է որ ոչ ոք երբէք կը սպասէ ինձի:»

Շատ մարդիկ կան որ կը նմանին Յովհաննէսի: Այսպիսիք ճշգրտաբար չըլլալով շատ հաճոյքէ և արտօնութիւններէ կը զրկուին: Ժամանակաւ Ամերիկայի առաջին նախագահին, Վաշինգտոնի, զրազիբը որոշեալ ժամէն

ուշ հասած էր տեղ մը, և կը ջանար արգարացնել զինք ըսելով թէ ժամացոյցն ետ էր, բայց Վաշինգտոն ըսաւ անոր, «Կամ՝ դուն նոր ժամացոյց մ'առնելու ես, և կամ ես նոր գրազիբ մը կ'առնեմ:»

Նաև կարևոր գործի մը համար կազմուած յանձնաժողովոյ մը մէջ, որոյ ութ անդամներէն մին որոշեալ ժամէն քառորդ մը ետքը եկած էր, խելացի մարդ մ'ըսաւ ուշ եկող անդամին. «Բարեկամ, կը ցաւիմ որ քու ժամանակիդ մէկ քառորդը կորուսիր, բայց աւելի գէշը սա է որ մեր եօթնէն իւրաքանչիւրին ալ մէկ մէկ քառորդ ժամանակ, ընդ ամէնն երկու ժամ, կորսնցունել տուիր, և իրաւունք չունիս այսպէս ընելու:»

Տղայք, կանուխ սկսելու էք ճշգրտաբար ըլլալու ամէն բանի մէջ. և շուտով կը ստանաք ճշգրտաբար ըլլալու սովորութիւնն, և այս սովորութիւնն շատ օգտակար պիտի ըլլայ ձեզ ձեր բոլոր կենաց մէջ: Եղիք փոյթ ի հնազանդել ձեր ծնողաց, ուսանել ձեր դասերը, երթալ ի դպրոց, եկեղեցի և կիրանորեայ դպրոց: Վերջապէս եղիք փոյթ և ճիշդ ընելու ինչ որ պիտի ընէք, և այս սովորութիւնը պիտի օգնէ ձեզ յաջողել ամէն բանի մէջ:

Մարդ մը մեծ և յաջող գործի տէր ուրիշ մարդու մը հարցուց, «Ի՞նչպէս կրնաս այնչափ շատ գործ տեսնել:» Միւսը պատասխանեց, «Ամէն բանի համար ժամանակ և տեղ ունենալով, և ամէն բան ժամանակին կատարելով:»

Թող ամէն պատանի սորվի այս դասն, և ըստ այնմ գործէ, և պիտի զարմանաք տեսնելով թէ որչափ շատ գործ կը կատարէք, և որչափ շուտով կը ստանաք այլոց վստահութիւնը:

ՅԱՒԱԼԻ ԴԵՊՔ ՄԸ

Եթե՞ր տարեկան աղջիկ մը երբ գիշեր ատեն ճրագով կը պարտէր տան մէջ, պատահմամբ անոր հանդերձները բռնկեցան: Խեղճ աղջիկը հօրը սենեակը վազեց, և մէկ կողմէն կը ջանար ձեռքով կրակը մարել: Հայրը քունէն արթննալով երբ տեսաւ որ խեղճ աղջիկը կրակի մէջ էր, շուտաբար մնաց: Մայրն աւելի ևս շուտաբար, «Ձուր, ջուր» պոռաց: Հայրը վազեց ջուր բերելու, և մինչև որ եկաւ, խեղճ աղջկան մարմինը շատ այրեցաւ: Վերջապէս ջուրով մարեցին կրակը, բայց աղջիկն երեք օր սաստիկ ցաւ կրելէ ետքը մեռաւ:

Այս դէպքին պատմութիւնը կը գրեմ սա պատճառաւ որ Աւետարեւրի ընթերցող տղայք զգուշանան այսպիսի վտանգներէ : Սակայն եթէ այսպիսի դէպք մը պատահի , շանալու են կրակը մարել ոչ թէ ջուրով , այլ անմիջապէս կապերտով կամ ուրիշ ծածկութեամբ ծածկելով անձը որոյ լաթերը բռնկած են :

Խնիա , դեկ . 9 , 1884

ՊԱՅՄԱՌ Մ . ԽՆՏՆԵԱՆ

ՀԱՆՍԻ

ԵՐԿՈՒ ԿՈՂՄԱՆՈՅՑՆԵՐԸ

Այս պատկերը կը ցուցնէ թէ կրինւանտացիք ինչպէս կ'ապրին : Նախ կը տեսնուի տուն մը փոքր դուռով : Տունը գրեթէ լոյս չառներ , քանզի չունի լուսամուտ , և կրնայ ըսուիլ թէ այնպիսի տան մէջ բնակիլ թշուառութիւն է : Բայց կրինւանտացիք եղած են ֆրիստունեայ , և կան անոնց մէջ ոչ սակաւ ընտանիք որ շատ երջանիկ են , թէպէտ այն երկիրը ցուրտ և անայի է : Այնպիսի տան մը մէջ , որոյ պատկերը կը տեսնես վերը , կը բնակէր ժամանակաւ ֆրիստունեայ ընտանիք մը , այսինքն մայր մը , երեք որդիք և դստրիկ մը : Հայրը մեռած էր , և Հանս , երէց որդին , իրը չորեքտասանամեայ , հօր անդ էր և կը հօգար տունը : Օր մը կրտսեր որդին , Միոնք , ելաւ հիւղէն , և գնաց սառույցներու վրայ ծակի մը բերանը փակ (այլ որտեղ) որ սարու : կրինւանտացուց գլխաւոր պաշարն է փոփի միս : Այս անասունները կրնան բաւական ժամանակ մնալ ջուրին տակ , բայց երբեմն երբեմն կ'ելլեն ջուրին երեսը սառուցին ծակերէն դուրս , և անատեն սրտորդք կը զարնեն զանոնք նիզակաւ : Երկր ուր

գնաց Միոնք՝ ըստ բաւականին հեռու էր տունէն , և մինչ հոն էր սկսաւ տեղալ այնպիսի յորդ և թանձր ձիւն , որ Միոնք չկրցաւ գտնել ճամբան տուն դառնալու : Մայրը , Հանս և կրտսերագոյն եղբայրը Մէդէք , սկսան հոգ ընել տղուն համար : Հանս պատրաստուեցաւ երթալ եղբորը ետեւէն և զանի գտնելով տուն բերել : Հագաւ աղուխաւ մորթէ վերարկու մը գլխանոցով , արջու մորթէ տափաւ (փանթալոն) , նաև արջու մոր

յելով կողմնացուցին կրնար երթալ դէպ ուղիղ այն կողմը : Հանսի մայրն , Անագ , էր կին բարեպաշտօն , և կըրթած էր իւր զակները ֆրիստունեաւ բար : « Հանս » , ըսաւ մայրը . « կողմնացոյցը զոր նաւապետէն առիւր՝ օգտակար և պիտանի է քեզ , կայ սակայն ուրիշ կողմնացոյց մը առաջնորդ և ուղեցոյց , այն է աղօթքը : Լաւ է որ երբ « կողմնացոյց » ալ առնուս հեռագ » Հանս հասկցաւ մօրը միտքը , և մայրն իսկոյն ծուներ դրաւ միւս տղոց հետ ,



սկսաւ խնդրել Աստուծոյն առաջնորդել Հանսի և դարձունել զնա եղբորը հետ ողջամբ տուն : Հանս առաւ նաև լապտեր , քանզի այն կողմերուն երկայն գիշերուան ժամանակն էր : Հագաւ ոտքի ամաններ որ յատկապէս յինուած էին ձեան վրայ քալելու համար և ելաւ ճամբայ այն սաստիկ բքոց ժամանակ : Լապտերով որով կը նայէր ըստէպ կողմնացուցին , Հանս կրցաւ անցնիլ սառուցի կայտերը , և յաճախ կը կանչէր , « Միոնք , Միոնք » , մինչև լսեց պատասխան : Միոնք պառկած էր ձեան դիպի մէջ և բոլորովին ծածկուած էր բաց ի գլխէն : Որովհետև այնպէս մտած և յոգնած էր որ չէր կարող

բարել , Հանս շարկեց եղբայրը , և առաջնորդութեամբ կողմնացուցին դիտելով ճամբան եկաւ տուն , ուր մայրը կը սպասէր անոնց դարձին անձկութեամբ : Ինչ ուրախութիւն էր , երբ Հանս և Միոնք մտան ներս ցած դուռէն իրենց մօր , եղբոր և քրոջը քով : « Փառք Աստուծոյ » , ըսաւ մայրը՝ փարեղով արտասուօք իւր որդւոյն , « Փառք Աստուծոյ » : « Այո » , ըսաւ Հանս , « ամէնքս փառք տարու ենք Աստուծոյ : Հիմա հասկցայ թէ լաւ է ունենալ երկու կողմնացոյց » :

թով ծածկեց իւր ոտքը : Այս թանձր բայց ցուրտ քաջ պատասպարող հանդերձին տակ ունէր Հանս շապիկ և զանկապան քիչ կոշուած թուշոյն մորթէն և փետուրներէն : Հանս , թէպէտ ցուրտէն պաշտպանուած էր , պէտք ունէր սակայն ևս աւելի կարևոր բանի մը : Ունէր կողմնացոյց մը զոր նաւապետ մը տուած էր անոր տարի մը առաջ : Հանս գիտէր թէ որ կողմ կ'իյնար ծակը ուր գացած էր եղբայրն որսալ փոկ , ուստի նա

բարել , Հանս շարկեց եղբայրը , և առաջնորդութեամբ կողմնացուցին դիտելով ճամբան եկաւ տուն , ուր մայրը կը սպասէր անոնց դարձին անձկութեամբ : Ինչ ուրախութիւն էր , երբ Հանս և Միոնք մտան ներս ցած դուռէն իրենց մօր , եղբոր և քրոջը քով : « Փառք Աստուծոյ » , ըսաւ մայրը՝ փարեղով արտասուօք իւր որդւոյն , « Փառք Աստուծոյ » : « Այո » , ըսաւ Հանս , « ամէնքս փառք տարու ենք Աստուծոյ : Հիմա հասկցայ թէ լաւ է ունենալ երկու կողմնացոյց » :


Կրտսնները ուրեմն կրինքանտի պէս երկիր մը անգամ կրնայ ըլլալ երջանկութիւն: Քրիստոնէութիւնը կըրնայ ամէն տեղ երջանիկ ընել զմարդ: Տղայք որ կը տեսնուին պատկերին ձախ դին՝ կը խաղան ուրախութեամբ իրենց փոքր դահուկներով: Պատկերին միւս անկիւնը կը տեսնէք եղիւմարդ որ կը կուտին արջու մը հետ: Իսկ պատկերին մէջտեղ սառուցին մէջ կայ ծակ մը ուր եկած է ծովածի մը օդ շնչելու: Հիւղին մօտ մարդիկ կը պատրաստեն իրենց դահուկներն և շուները ճամբորդութեան համար: Երբ մենք կ'ելլենք դուրս մեր առններէն, չունինք պէտք կողմնացուցի մեր ճամբան գտնելու, մինչ հանուունէր պէտք այն գործւոյն, ինչպէս նաւապետն ունի. բայց ուր և դանուկնք, ամէնքս ունինք պէտք միւս տեսակ կողմնացուցին միշտ և յամենայն ժամ: Զմոռնանք ուրեմն «ոջի» կոչուած կողմնացոյցը:

ԱՐԾԻԻ

Արծիւը կոչուած է թագաւոր թռչնոց, ինչպէս առիւծը կը կոչուի թագաւոր կենդանեաց: Եւ տեսակ արծիւներ կան, և ամէնքն ալ նշանաւոր են իրենց մեծութեան և զօրութեան կողմանէ: Արծիւներն ընդհանրապէս կ'ապրին զոյգ զոյգ, իրենց բոյները կը շինեն բարձրաբերձ ծառերու վրայ, կամ բարձր և սեպացեալ ժայռերու մէջ, և միևնոյն բոյնը կը գործածեն քանի մը տարիներ:

Արծիւք են գիշակեր թռչուններ, և կ'ուտեն գառն, նապաստակ և փոքր թռչուններ: Զուիցերայի մէջ արծիւ-

ները երբեմն փոքր տղայք իսկ յափտակած տարած են: Արծիւները օդին մէջ շատ բարձր կ'ելլեն, և կըրնան երկար ատեն մնալ հոն, և սուր աչուներովը կրնան հեռուէն տեսնել իրենց որսը: Կան արծիւներ որ ձուկ կը սիրեն, և յաճախ փոխանակ ջուրին մէջ ձուկ որսալու, կը գիտեն ձուկ բռնող թռչուններն, և երբ կը տեսնեն որ թռչուն մը բերանը ձուկ առ-



ՔԱՋ ՏՂԱՅ

Գեղեցիկ կիրակի առտու մը, մաքուր հագուած տղայ մը, ձեռքը գիլք, քաղքին մէկ գեղեցիկ փողոցէն ուրախութեամբ կ'երթար կիրակնօրեայ դպրոց: Երբ մօտեցաւ փողոցին անկիւնը ուստի կը տեսնուէր եկեղեցին՝ լսեց տղայոց ձայներ, և դառնալով դէպ ի ձայնը՝ տեսաւ որ խումբ մը տղայք կը խաղային քարէ փոքրիկ գնտակներով: Ասոնք կանչելով յիշեալ տղան՝ ջանացին համոզել զնա խաղակից ըլլալ իրենց, բայց երբ տղան չանսալով անոնց կ'երթար դէպ յեկեղեցին, սկսան ծաղրել զնա, և կանչել ետեէն. «Ա՛սօ՛թ, չի կրնար ետ մընալ կիրակնօրեայ դպրոցէն:» «Ա՛յո՛» ըսաւ տղան դառնալով և նա յերով անոնց երեսը տխրութեամբ, «չեմ կրնար ետ մնալ կիրակնօրեայ դպրոցէն, բայց կրնամ արհամաւ րհեւ ձեռք ծաղրը:»

ներով իւր բոյնը կը տանի, կ'իյնան այն թռչունին ետեէն, կը ստիպեն զայն բերնէն ձգել իւր որսն, և որսը գտին իյնալէ առաջ իրենք կը յափըշտակեն զայն և կը տանին իրենց բոյնը: Այսպէս արծիւք փոխանակ իրենց աշխատութեամբ հայթայթելու իրենց պարէնը, չար մարդերու պէս կ'ընտրեն ուրիշները կողոպտել:

Ա.Ի.Ե.Տ.Ա.Բ.Ե.Ր.Ն.Ե.Ր.ՈՒ Գ.Ի.Ն.Ե.Ր.Ը  
Ա.Մ.ՍԱ.ԿԱՆ (Հայերէն գրով, և Հայ-Տաճկերէն և Պոլսերէն), փոսթայի ծախքով, տարին ¼ մէճիտիլէ:

Ամերիկայի Միտիոնարաց ընկերութեան կողմէն  
Խմբագիր ձ. Բ. ԿՐԻՆ  
Ֆիլադելֆիայի Եօզուշու, Ամերիգան Խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՅԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱԿՈՒ ՊՅԵԱՅԵՆ